

ԹՈՒՐԲ ԳՈՐԾԱՏԵՐԵՐՈՒ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՅՑԵԼԵՑ ՀԱՐԻՐԻԻ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկն ընդունեց թուրք գործատերերու մէկ պատուիրակութիւնը, զոր կը գլխաւորէր Մոհամէտ Հապապ: Ներկայ էր տնտեսական բարգաւաճման խորհուրդէն պատուիրակութիւն մը, նախագահութեամբ Ռամիհ Ռըզրիի:

Հանդիպումին քննարկուեցան լիբանանցի եւ թուրք գործատերերու միութեան ստորագրելիք շարք մը համաձայնութիւնները, ինչպէս նաեւ «Յենիսիս» պանդոկին մէջ կայանալիք տնտեսական խորհրդածոյցին առնչուած հարցեր:

Վարչապետ Հարիրիի այցելեց նաեւ Լիբանանի մէջ Պեյճիքայի դեսպան Ֆրանսուա Կուսթան: Քննարկուեցան Լիբանան - Պեյճիք երկկողմ կայ յարաբերութիւնները եւ «Փարիզ-2» ժողովի կայացման պատրաստութիւնները:

Կուսթան յայտնեց, որ Պեյճիքայի վարչապետը ներկայ պիտի գտնուի «Փարիզ-2» ժողովին:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ...

Շարունակուած Ա. ԷջԵԳ

բարձրաստիճան պինտորական մըն է պաղեստինեան իշխանութեան ապահովութեան ուժերուն մէջ: Իսրայէլեան ապահովութեան աղբիւրներուն համաձայն, Մեքտրատի կապեր ունի նաեւ «Աքայի նահատակներու փառանքներ» շարժումին հետ:

ԱՐԱՅԱԾ ՀԱՄԱՍԻ ՄԱՍԻՆ ԽՈՐՐԴԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ԿԱՏԱՐԵ

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատ երկն հանդիպում ունեցաւ Եգիպտոսի գաղտնի սպասարկութեանց տնօրէնին՝ Օմար Միլէյմանի հետ, քննարկելու եւ արձեւորելու համար Ֆարսիի եւ Համասի միջեւ տեղի ունեցած բանակցութիւնները, որոնց նպատակն էր վերջ տալ անձնասպանական գործողութիւններուն: Գահիրէի մէջ տեղի ունեցած բանակցութիւնները աւարտած էին առանց համաձայնութեան մը յայտարարութեան:

Համասի մէջ, Համասի Կեդրոնական Խորհուրդի անդամ Սալէմ Մեշալ ըսաւ, որ շարժումը պիտի չդադրեցնէ Իսրայէլի մէջ անձնասպանական գործողութիւնները:

Միլէյմանի հետ ունեցած տեսակցութեան աւարտին, Արաֆատ ըսաւ, որ դրական ու արդիւնաւետ հանդիպում մը ունեցած է Եգիպտոսի պաշտօնատարին հետ: Արաֆատ դրուատեց Եգիպտոսիները՝ դիտել տալով, որ անոնք յաջողեցան հովանաւորել բանակցութիւնները Ֆարսիի, զոր ինք կը ղեկավարէ, եւ Համասի միջեւ:

Համաս կը մերժէ Արաֆատի խաղաղութեան համաձայնութիւնները Իսրայէլի հետ եւ Սեպտեմբեր 2000ի ըմբոստութենէն ի վեր տասնեակներով անձնասպանական գործողութիւններ կատարած է Իսրայէլի դէմ:

Շար.՝ Էջ 10

ՄԱՀԱԶԴ

ՔԱՀԼԻ խնամակալութիւնը, տնօրէնութիւնը, տիկնանք օժանդակ յանձնախումբը եւ անձնակազմը կը գումծեն ՔԱՀԼԻ Տիկնանք օժանդակ յանձնախումբին երկար տարիներու գործունեայ անդամուհիներէն՝

ԹԱԳՈՒՆԻ ԳՐԳԵԱԾԱՐԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 14 Նոյեմբեր 2002ին:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Ասատուր եւ Օտարի Իգմիրլեան Օրիորդ Ովսաննա Իգմիրլեան
Տէր եւ տիկին տղթ. Վարուժան եւ Զարուկ Զալեան եւ զաւակունք

Պէնյեան ընտանիք
Գրգեաշարեան ընտանիք
Պահարեան ընտանիք
Պալեան ընտանիք
եւ Համայն ազգականներ կը գումծեն իրենց քրոջ, մորաքրոջ եւ Հարազատին՝

ԹԱԳՈՒՆԻ ԳՐԳԵԱԾԱՐԵԱՆԻ (Ծնեալ՝ ԻԶՄԻՐԼԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 14 Նոյեմբեր 2002ին, իր ընկալարանին մէջ, Նաբբաշ:

Յուդարկաւորութեան պաշտամունքը պիտի կատարուի Կիրակի, 17 Նոյեմբեր 2002, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Հայ Աւետարանական Ա. եկեղեցւոյ մէջ, «Մեքսիք» փողոց, ուրկէ Հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Յըրն Շրպպէի Հայ Աւետարանական գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը Նաբբաշ, Կիրակի 17, Երկուշաբթի 18 եւ Երեքշաբթի 19 Նոյեմբերին: Հեռ. 04-412687:
● Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կատարել Հայ Աւետ. Կեդրոնական Բարձր. վարժարանի «Շմաւոն Իվմիրլեան» կրթական ֆոնտին:

ՆԱԽԱԳԱԸ ԼԱՇՈՒՏԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախագահ Վոր. Էմիլ Լահուտ երկն Պապտայի մէջ ընդունեց Պէյրութի փաստաբաններու սենտիքայի նախագահ Ռեմոն Շտիտը եւ փաստաբաններու միջազգային համադաշնակցութեան նախագահ Անթուան Աքըլը:

Նախագահ Լահուտ շնորհաւորեց Աքըլը եւ դրուատեց լիբանանցի փաստաբաններուն արաբական եւ միջազգային ներկայութիւնը՝ նկատել տալով, որ Լիբանան շրջանային եւ միջազգային գետնի վրայ իր կենսական դերը վերականգնած է, միշտ ալ բարձրացած է իր պատկանելիութեան ջանքերով, որոնք փաստեցին, որ տարածութեամբ փոքր այս երկիրը մեծ է իր կարողութիւններով:

Հանդիպումին խօսք առաւ նաեւ Շտիտ, որ դրուատեց Աքըլի ընտրութիւնը՝ պայն նկատելով յաղթանակ մը, որուն մասնակցեցան Աւստրալիոյ մէջ բնակութիւն հաստատած լիբանանցիները: Շտիտ նշեց, որ իր ընտրութենէն ետք Աքըլ արտասանած է խօսք մը, որուն մէջ կոչ ուղղած է օրէնքի բոլոր ներկայացուցիչներուն պայքարելու ի խնդիր միջազգային օրէնքներու գործադրութեան, խաղաղութեան

հաստատումին եւ ժողովուրդներու մէջ արդար ու թեան սկզբունքներու տարածումին:

Աքըլ շնորհակալութիւն յայտնեց նախագահ Լահուտի ցուցաբերած պօրակցութեան ու քաջալերանքին համար: Նախագահ Լահուտ նաեւ ընդունեց արդարութեան նախարար Սամիր Փըրըրը եւ դատական իշխանութեանց գերագոյն խորհուրդի նախկին նախագահ դատախապ Նասրի Լահուտը, որ նախագահ Լահուտի կողմէ պարգահատուեցաւ մայրիներու «Սպայից բարձրագոյն կարգ»ի շքանշանով:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ՍՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ եւ պաշտպանութեան երեսփոխանական յանձնախումբի նախագահ Սամի Խաթիպ, որսորդութեան դիմագրաւած հարցերուն եւ խոչընդոտներուն ակնարկելով, յայտնեց, որ յառաջիկայ Երկուշաբթի օր պիտի յայտարարուի եւ վաւերացուի որսորդութեան վերաբերեալ օրինագիծը:

● ՆԱԽԱԿԻՆ վարչապետ Սեյիմ Հըս ողջունեց «Փարիզ-2» ժողովին գումարումը եւ ըսաւ. «Լաւ է ուշ, քան երբեք»:

● ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ նախագահ Նեպիհ Պըրրի երկն ընդունեց վարչապետ Ռաֆիք Հարիրիին, որուն հետ քննարկեց «Փարիզ-2»ի առնչուած հարցեր: Հարիրի յայտնեց, որ Մայիսի վարչապետը պիտի մասնակցի նաեւ նշեալ վեհաժողովին: Ան ընդունեց նաեւ իմամ Մուսա Սատրրի քոյրը՝ Ռապապ Սատրրը եւ մայր շարժումի փոխ նախագահ երեսփոխան Սայրա Սատրրին:

● ԼԻԲԱՆԱՆԵԱՆ Կուսակցութիւններու Համախմբումը երկն դատապարտեց այն երեւոյթը, որ Լիբանանի կարգ մը սեփական յարաբերութեան իրար հետ զրոյցները, որոնք Պըրրիին հրաւիրեցին ներկայ գտնուելու Սատրրի հաստատութիւններու կազմակերպած խորհրդածոյցովին:

Պըրրի ընդունեց նաեւ նախարար Ալլա Ռահիմ Մըրատը եւ բանակի սպայակոչի պետ Վոր. Ռամիկ Ապու Համկան:

● ԵՐԵՍՓՈՒՆԱՆ Սայրա Աքըլ երկն կոչ ուղղեց պարտունցիներուն՝ յետաձգելու էլեկտրականութեան 2001ի իրենց ներդրումը պարտաւորութիւններու փակումը՝ շեշտելով, որ ժողովուրդը կորսնցուցած է իր վստահութիւնը էլեկտրականութեան ընկերութեան նկատմամբ, իբրեւ արդիւնք երեսակայական գումարներով ստացագրիւներուն:

● ԼԻԲԱՆԱՆԵԱՆ Կուսակցութիւններու Համախմբումը երկն դատապարտեց այն երեւոյթը, որ Լիբանանի կարգ մը սեփական յարաբերութեան իրար հետ զրոյցները, որոնք Պըրրիին հրաւիրեցին ներկայ գտնուելու Սատրրի հաստատութիւններու կազմակերպած խորհրդածոյցովին:

վարժարաններուն մէջ կ'օգտագործուի «Թարիխ Իյմի Հատիս» դասագիրքը, որ ամերիկեան պատրաստութիւն է եւ ուր Հըրպալլա ու Համաս շարժումները կը նկատուին ահաբեկչական: Համախմբումը կոչ ուղղեց նշեալ վարժարաններուն՝ դադարեցնել այդ դասագիրքին գործածութիւնը:

● ՀԱՆՐՕԳՈՒՏ շինութեանց երեսփոխանական յանձնախումբը երկն քննարկեց ինքնաշարժ վարելու եւ հետիոտն փոխադրուողներու առնչուած օրէնքները, ինչպէս նաեւ պատրաստեց մոթորսիքի օրէնքներուն պատճառով հարցերը լուծելու նպատակով առաջարկներու ցանկ մը:

● ՆԵՐՔԻՆ Ապահովութեան Ուժերու ընդհանուր տնօրէն Վոր. Մարուան Չէյն երկն ընդունեց Լիբանանի մէջ Եգիպտոսի դեսպանին փոթոթոյցային այցելութիւնը:

● ՆԵՐՔԻՆ Ապահովութեան Ուժերու ընդհանուր տնօրէն Վոր. Մարուան Չէյն երկն ընդունեց Լիբանանի մէջ Եգիպտոսի դեսպանին փոթոթոյցային այցելութիւնը:

ԿՈՒՉՈՒԻ

● Արական հագուստի վաճառատան մը մէջ վաճառող փորձառու օրիորդ մը: Հեռ. 03 - 821600:

ԾԱԽՈՒ

3ԱՐԿԱՐԱՄԻՆ
● Մըզիտի շրջան, «Կարիւ 1», 240 քառ. մետր տարածութիւն, գեղատեսիլ դիրք, լողաւազան, յարմար գին: Հեռ. 03-627469:

ԿՈՒՉՈՒԻ

● Վարպետ ոսկերիչ մը (սեւեթեր): Դիմել՝ հեռ. 03 - 719404, պրն. ժոզէֆին:

ՎԱՐՉՈՒ

3ԱՐԿԱՐԱՄԻՆ
● Պուրճ Համուտ, «Արմենիա» պողոտայ, Զաղաքապետարանի մօտ, Ա. յարկ, գրասենեակի կամ դարձմանատան յարմար: Հեռ. 01-256015:

Ը. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՄԱՐՄԻՆ

«ARMENIA: GENOCIDE DENIED»

Վաւերագրական ֆիլմի ցուցադրութիւն
Սփռուած՝ Աւստրալիոյ պետական «SBS» պատկերասփիւռի կայանի «DATELINE» հաղորդաշարին:
Ցուցադրութեան տեղ խօսք կ'առնէ ֆիլմի հեղինակ՝
MATTHEW CARNEY
Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 15 Նոյեմբեր 2002, երկուշաբթի ժամը 8:00ին, «Աղբալեան - Ը.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ:

ՇՐԱԻՐ

ԼԻԲԱՆԱՆ ԿԸ ՀՐԱԻՐՈՒԻՒ ԱՆԴԱՄԱԿՅԵԼՈՒ ՄԵՉԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԱՏԵԱՆԻՆ

Յունաստանի դեսպան ժորժ Կապրիալիտէս երկն ներկայ գտնուեցաւ Պուսթրոս պալատին մէջ արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Մահմուտ Համուտի գլխաւորած ժողովին, որուն մասնակցեցաւ նաեւ Եւրոպական Միութեան դեսպան Փաթրիք Ռընո:

Կապրիալիտէս Համուտի փոխանցեց Դանիոյ արտաքին գործոց նախարարին՝ Պիր Սիլիկ Մուլըրի նամակը, միջազգային քրեական ատենակի մը կազմութեան առնչութեամբ: Մուլըր ամբողջական պօրակցութիւն կը յայտնէր ատենակին կազմութեան եւ Լիբանանէն կը պահանջէր անդամակցիլ:

Համուտ խոստացաւ յառաջիկայ քանի մը օրուան ընթացքին անպայման պատասխանել առաջարկին՝ նկատի ունենալով, որ արաբական շարք մը երկիրներ, ինչպէս՝ Եգիպտոս, Եմէն, Մարոք, Ալճերիա, Արաբական Միացեալ Էմիրութիւններ, Քուէյթ, Սուրիա, ինչպէս նաեւ Իրան արդէն իսկ անդամակցած են նշեալ ատենակին:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ...

Շարունակուած Ա. ԷջԵԳ

հետեւիլ Հայաստանի հանրային հեռուեսիլի ուղղակի սփռումին միջոցով, իսկ դրամահաւաքին մասնակցիլ փափաքողները կրնան համացանցին միջոցով կապ հաստատել կազմակերպիչներուն հետ www.armeniafund.org եւ www.himnadram.org հասցեներով:

Տեր Լեւոնդեան ցկատել տուաւ, որ հանգանակուած գումարը պիտի յատկացուի Լեւոնյան Դարաբաղի աւելի քան 20 բնակավայրերը իրարու կապող «հիւսիս - հարաւ» մայրուղիի Ստեփանակերտ - Շոշ - Սարուշէն, Սարուշէն - Կարմիր Շուկայ, Ազոխ - Մակուռի, Մակուռի - Հատուր, Ստեփանակերտ - Բալուշա, Կիլիզա - Չլղրան - Դրմբոն, Դրմբոն - Մարտակերտ հատուածներու շինութեան՝ առաջնահերթութիւնը յայտնի Կիլիզա - Չլղրան եւ Սարուշէն - Կարմիր Շուկայ հատուածներուն: Նշեալ 7 հատուածներուն երկարութիւնն է 132.3 քմ., կ'ակնկալուի զայն աւարտել մինչեւ 2005, եւ ընդհանուր ծախսն է մօտ 19 միլիոն տոլար:

Այսօրուան դրութեամբ կը բացի «հիւսիս - հարաւ» մայրուղիին 40 քիլոմէթրոց հատուած մը, որուն համար ծախսուած է աւելի քան 6 միլիոն տոլար:

Նոյեմբեր 10ին Հայաստանի եւ Լեւոնյան Դարաբաղի նախագահներուն մասնակցութեամբ հանդիսար ձեւով կատարուած էր բացումը «հիւսիս - հարաւ» մայրուղիին Դաշրուլաղ - Բալուշա հատուածին, որուն երկայնքը 9,7 քմ. է:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Մարիամ Գատէմեան եւ զաւակը՝ Արա Տէր եւ տիկին Վաչէ Գատէմեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Անդրանիկ Պետրոսեան եւ զաւակունք
Տիկին Աննա Գատէմեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Միսաք Գատէմեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Վարուժան Գատէմեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Արտաշատ Պետրոսեան եւ զաւակունք
Զամարեան ընտանիք
Գէորգեան ընտանիք
Մուղալեան ընտանիք
Մխիթարեան ընտանիք
Կիւլուանեսեան ընտանիք
եւ Համայն ազգականներ կը գումծեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ Հարազատին՝

ԻԱԶԵՐ ԳԱՏԷՄԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 14 Նոյեմբեր 2002, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուդարկաւորութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 15 Նոյեմբեր 2002, առաւօտեան ժամը 11:00ին, Ժուլիէի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ, ուրկէ Հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Ժուլիէ, Ուրբաթ 15, Շաբաթ 16 եւ Կիրակի 17 Նոյեմբերին:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին տղթ. Ժան Գասպեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Վարուժ Շամլեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Պերճ Պետրոսեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Արթուր Ակոբեան եւ զաւակունք
եւ Համայն ազգականներ կը գումծեն իրենց մօր, մեծ մօր, քրոջ, հորաքրոջ եւ Հարազատին՝

ԱՆԱՅԻՍ ԳԱՍԱՊԵԱՆԻ

(Ծնեալ՝ ԱԿՕՇԵԱՆ, Իգմիր 1921ին)

մահը, որ պատահեցաւ յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուդարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Մոնրէլայի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, Երեքշաբթի, 5 Նոյեմբերին: Հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Մոնրէլայի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին պալատին բնակարանը, «Միրատոր» շէնք, «Սէլիտի» պողոտայ, Էշրէֆիէ, 10 յարկ, հեռ. 01-216345, Շաբաթ 16 եւ Կիրակի 17 Նոյեմբերին:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
Կ'ԸՆԴՈՒՆԻ ԲԱՐԵԿԱՐԳԵԱԼ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ
ԸՆԴՀ. ՔԱՐՏՈՒՂԱՐԸ**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. կաթողիկոս վեհարարին մէջ ընդունեց Բարեկարգեալ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի ընդհ. քարտուղար դոկտ. Սիթրի Նիոմին, ընկերակցութեամբ Հայկապետան Համալսարանի նախագահ վեր. Փոյ Հայտնաբերանի:

Դոկտ. Ս. Նիոմի միջնորդեցական շրջանակներէն վեհափառին ծանօթ անձ մըն էր, որ Լիբանան կատարած իր առաջին այցելութեան առիթով կու գար նաեւ Աթինիս, հանդիպումներու Նորին Սրբութեան հետ: Հանդիպման ընթացքին արծարծուեցան միջնորդեցական հարցեր: Յատկապէս խօսուեցաւ Բարեկարգեալ Եկեղեցիներու ընտանիքին եւ ոչ քաղկեդոնական ուղղափառ եկեղեցիներու միջնորդութեամբ արտադրուող շարունակելու կարելիութիւններուն մասին: Աւելի քան տասը տարիներ առաջ սկսուած երկխօսութիւն մը սկսելու նախաձեռնութեան մէջ վեհափառ հայրապետը իր կարեւոր ներդրումը ունեցած է: Նաեւ այս առիթով անդրադարձ մը կատարուեցաւ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդին եւ կայս վերակազմակերպելու անհրաժեշտութեան մասին:

Յիշեալ կառույցին կեդրոնը կը գտնուի Ժընեւի մէջ, անոր անդամ են աշխարհի բոլոր Բարեկարգեալ Բողոքական եկեղեցիները, ներառեալ՝ Հայ Աւետարանական եկեղեցին:


**ԸՆԴՈՒՆՈՒԹԻՒՆԸ ՅԱՏԱԿ
ԾՐԱԳԻՐ ՄԸ ՉՈՒՆԻ**

Երեսփոխան Էմիլ Լահուտ երէկ «Մակապին» շաբաթաթերթին տուած իր հարցազրոյցին մէջ շեշտեց, որ ընդդիմադրութիւնը միակ եւ միացեալ ծրագիր մը չունի՝ շեշտելով, որ պետական համաձայնութիւնները երկարատեւ պիտի դիմանան եւ պիտի ըլլան արդիւնաւէտ:

Քըրնէթ Շահուանի հանդիպումին մասին հարցումի մը պատասխանելով՝ Լահուտ ըսաւ, որ ան չի ներկայացներ Լիբանանի քրիստոնէայի համայնքը: Ան նկատել տուաւ, որ հիւսիսային Միջին երեսփոխանական մասնակի ընտրութիւնները ցոյց տուին, որ հանդիպումին անդամներէն ոմանք միայն անձնական շահ կը հետապնդեն:

Անդրադառնալով Երեսփոխանական Հանդիպումին՝ Լահուտ շեշտեց, որ նշեալ հանդիպումը չէ ստեղծուած իբրեւ պատասխան Քըրնէթ Շահուանի հանդիպումին, այլ նպատակ ունի սրբագրել քրիստոնէայի համայնքին վերաբրուած այն յոյսերն ու ծրագիրները, որոնք վերջին շրջանին մեծ աղմուկ ստեղծեցին, յատկապէս Լիբանանէն դուրս այլ երկիրներու մէջ:

Լահուտ նշեց, որ իր հարցազրոյցին շարունակումը կը կատարուի միջազգային մամուլը գլխաւորաբար լուսարձակելու համար: Սակայն իր հարցազրոյցին շարունակումը կը կատարուի միջազգային մամուլը գլխաւորաբար լուսարձակելու համար:



14 Նոյեմբերի տեղական մամուլը գլխաւորաբար լուսարձակելու համար է իրաքի կողմէ ՄԱԿի թիւ 1441 բանաձեւին ընդունումը եւ այդ մասին արտայայտուած կանաչան տեսակետները:

«Նահար» գրած է, թէ Պաղտատ ընդունեց ՄԱԿի բանաձեւը եւ կը պատրաստուի քննիչները ընդունելու: Ուաշինկթըն կասկածով կը մտնայ Իրաքի որոշումին, իսկ Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէի կը պահանջէ, որ քննիչներու խումբին մաս կազմեն արաբ մասնագետներ եւս:

«Սաֆիր»-ի համաձայն, Իրաքի համաձայնութիւնը միջազգային գետնի վրայ ողջունուեցաւ, իսկ Մոսկուա կը գտնէ, որ Իրաքի դէմ հաստատուած պատժամիջոցները կրնան շնջուիլ: Ֆարուք Շարէի Պաապտայի մէջ կը յայտնէ, որ Սուրիա երբեք մասնակից պիտի չդառնայ Իրաքի դէմ որեւէ գործողութեան:

«Անուար» նշած է, թէ ՄԱԿի քննիչները յառաջիկայ շաբաթակիցին Պաղտատ կը հասնին:

Ըստ «Մուսթաքպաթի», նախագահներ Շիրաք եւ Ասատ կ'արժեւորեն Իրաքի կողմէ ՄԱԿի բանաձեւին ընդունումը եւ կը գտնեն, որ այս քայլով պատերազմի ուրուական կը հետաճուի Միջին Արեւելքի շրջանէն: Ըստ թերթին, Միացեալ Նահանգներու նախագահ ձորձ Պուշ քաստ է, թէ աշխարհը կը սպասէ Իրաքի կինաթափումը, որ պիտի նպաստէ աշխարհին մէջ խաղաղութեան հաստատման:

«Լիուս» գրած է, թէ Իրաք չէկոքացուց պատերազմի հռչակելու Ուաշինկթընի ներկայացուցած պատրուակները: միջազգային ընտանիքը կ'ողջունէ, իսկ Ուաշինկթըն պոչուաւորութեամբ կը մտնայ Իրաքի որոշումին:

«Պարաք»-ի համաձայն, Իրաք առանց վերապահութեան ընդունեց թիւ 1441 բանաձեւը: Ուաշինկթըն եւ ՄԱԿ կը սպասեն գետնի վրայ գործնական քայլերու:

Ըստ «Քիֆահ Արապի»-ի, Իրաքի համաձայնութիւնը Միացեալ Նահանգները «կինաթափուրաւ»: Ուաշինկթըն ողջունեց այս քայլը եւ յայտնեց, որ Իրաքէն կը սպասէ խօսքէն գործի անցնիլ: քննիչները երկուշաբթի Պաղտատ կը հասնին:

Պաղտատինեան հարցին առնչութեամբ «Անուար» գրած է, թէ Իսրայիլի վարչապետ Արիէլ Շարոն ըսած է, թէ պաղեստինեան պետութիւնը բացարձակ իրողութիւն մըն է: Արաքաթ պատասխանելով Նեթանիահուի այն սպառնալիքներուն, ըստ որոնց, ան Արաքաթը պիտի արտաքսէ եթէ վերընտրուի, յայտարարած է, թէ «սակիս իմ եւ իմ պապերու երկիրն է»:

«Տիար»-ի համաձայն, Նապլուս կը մնայ իսրայիլեան բռնագրաւման տակ, իսկ Իսրայիլի յաշտպանութեան նախարար Շաուլ Մոֆապ յայտարարած է, թէ այս գործողութեան նպատակն էր կասեցնել «սահաբեկչութիւնը»:

«Սաֆիր» նշած է, թէ Նապլուս քաղաքը անորոշ ժամանակով իսրայիլեան բռնագրաւման տակ պիտի մնայ, իսկ խաղաղութեան քարտէսը կարգ մը փոփոխութիւններու ենթարկուելու ճամբուն մէջ է:

«Լիուս» նշած է, թէ ձորձ Պուշ կը խոստովանի, թէ շրջանին մէջ իրադարձութիւնները կրնան խանգարել խաղաղութեան գործընթացը: Շարոն կը մերժէ հեռացնել Արաքաթը՝ ըսելով, թէ պաղեստինեան պետութիւնը կատարուած իրողութիւն մըն է:

«Նահար»-ի համաձայն, Արաքաթ իսրայիլեան բանակին վայրագութիւնները որակած է մարդկային չափանիշներու խախտում եւ ոճի մարդկութեան նկատմամբ:

Տեղական գետնի վրայ, թերթերը անդրադարձած են «Փարիզ - 2» ժողովին պատրաստութեան եւ ներքին քաղաքական կացութեան: «Տիար» գրած է. «Փարիզ - 2» ժողովին համար ի՞նչ գին պիտի վճարէ ժողովուրդը: Ըստ թերթին, նոր 7 միլիար տոլարի պարտքին յաւելումը մասնագետներու եւ քաղաքական մարդոց կողմէ վտանգաւոր կը նկատուի: Թերթը նաեւ նշած է, թէ վարչապետին մտիկ շրջանակը նախարար Ժան Լուի Քըրտահին կ'ամբաստանէ, որ սեփականաշնորհման գործընթացը կ'արգիլէ:

«Տապիրա» կայանէն սփռուած եւ Ուսամա Պըն Լատէնին վերագրուած ձայներիցին մասին «Տիար» գրած է, թէ ձորձ Պուշ ըսած է, թէ այս հարցին լրջութեամբ կը մտնանա՞ք եւ վերլուծողները կը կարծեն, թէ խօսողը Պըն Լատէնն է:

Թերթը նաեւ գրած է, թէ Եգիպտոսի մէջ վեց անձեր ձերբակալուած են Իսրայիլի հաշուոյն լրտեսութիւն ընելու յանցանքով:

ՄԱՍՏԱՄ ՀԻՒՍԷՅՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ...

Շարունակուած Ա. Էջէն

«Պապել» կ'աւելցնէր, որ Իրաքի բոլոր դաշնակից եւ եղբայր պետութիւնները պէտք է գիտակցին, թէ հարցը լուծուած պիտի չըլլայ, որովհետեւ ամերիկեան եւ քրիստոնական կառավարութիւնները վստահելի չեն: Օրաթերթը կը գրէր նաեւ, որ Իրաքի համակերպումը ցոյց կու տայ, թէ անկա պատրաստակամ է գործակցելու, հակառակ անոր որ հաւաքական քանդումի գէն-քեր չունի: «Պապել» ակնարկէր, որ Իրաք արժանի է վարձատրութեան, որ կրնայ թարգմանուիլ 12ամեայ պատժամիջոցներու շնորհով: Ընդհանրապէս բոլոր իրաքցիները՝ ժողովուրդը, դիւանագէտներ եւ բարձրաստիճան պաշտօնատարներ կը հաւատան, թէ Միացեալ Նահանգներուն յայտարարած պատերազմի սպառնալիքը մէկ շաբաթի կարգի մը մէջ շարաքի վերջ կ'ապրուի: Անոնցմէ շատերու համաձայն, Սատամի կեցուածքը պարզապէս քանի մը ամիսով պիտի յետաձգէ պատերազմը, սակայն, պիտի չկարենայ վերջնականապէս զայն շնջել: Դիւանագէտներ իրենց կարգին կ'ըսեն, որ Իրաքի կողմէ բացառիկ գործակցութեամբ միայն կարելի է խուսափիլ ամերիկեան յարձակումէն: Միացեալ Նահանգները հանդարտ չունենալով զայն, երբ Իրաք ընդունեց ՄԱԿի բանաձեւը: Մէտոսական Արաքի եւ Մոցի մնացեալ թագաւորութիւններն ու իշխանապետութիւնները կոչուող երկրներ Իրաքի գործակցելու միջազգային կազմակերպութեան հետ, որպէսզի կարելի ըլլայ շրջանը փրկել պատերազմէ մը:

Ռիատ, որ 1991ի պատերազմին մասնակցած էր Գոլէյթի ազատագրման, յայտարարեց, որ արտօնութիւն պիտի չտայ ամերիկեան ուժերուն դէմ իր խորհուրդը: ՄԱԿի քննիչները գոհունակութիւն յայտնեց, որ Իրաք ընդունած է ՄԱԿի բանաձեւը, ինչպէս նաեւ՝ յոյս յայտնեց, որ Պաղտատ գործակցի ՄԱԿի հետ, որպէսզի աւարտուի իրաքի ժողովուրդին ստանալու թիւ:

Քուէյթ աւելի զգուշաւոր կեցուածք որդեգրեց՝ դիտել տալով, որ պէտք է սպասել, որովհետեւ անցեալին այլ Իրաք խոստացած էր գործակցիլ, սակայն քիչ ետք վտարած էր քննիչները:

15 ՆՈՅԵՄԲԵՐ - 22 ՆՈՅԵՄԲԵՐ 2002

ԵՐԿԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
«ԵՐԿԻՐ» ՇԱԲԱԾԱԹԵՐԹԻ

- Տեր Պետրոսեանը սկսել է խօսել Էջ 3
- Ժառանգորդ՝ առանց ժառանգութեան Էջ 5
- Կենսաբոցակ. հաւասարութիւնից դէպի արդարութիւն Էջ 8
- Այս տարի դպրոցում ջեռուցում կը լինի, իսկ Յունուարի՞ն Էջ 10
- «Իրանգամին» փառատօնը մտորումներ է մղում Էջ 11
- Զաղաքական աշխատանքների կիզակետ Էջ 12

**ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է
Հ. Յ. Դ. ԼԵՄԻ
2003Ի ՊԱՏԻ ՕՐԱՅՈՅՅԸ**

Հ.Յ.Դ. ԼԵՄ. 30ամեակ

1973 2003

ՍԱԿ 10,000 ԼԻԲ. ՈՍԿԻ

365 ՕՐԵՐԷՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ

Շեւեռեալ միութիւնը կը ստանձնէ օրուան մը ձաշի ծախսը՝ 300 տոլար:

ՄԵԼԶԱ - խնայողութեան եւ վարկի համագործակցական միութիւն՝ 16 Նոյեմբեր:

**Հ. Յ. Դ. «ԿԱՐՄԻՐ ԼԵՆ» ԿՈՄԻՏԵՆԻԹԵԱՆ
ԴԱՍՏԻՄԱԿԶԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ - ԱՅՆՃԱՐ**

«ARMENIA: GENOCIDE DENIED»

Վաւերագրական ֆիլմի ցուցադրութիւն

(Ֆիլմի պատրաստութեան եւ անոր ստեղծած արձագանգի մասին տեղեկութիւններ պիտի փոխանցէ Հայ Դատի Յանձնախումբը)

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 16 Նոյեմբեր 2002, երկուշաբթի ժամը 8:00ին, «Սարգիս Զէյթեան» ժողովրդային տան սրահին մէջ:

ՀՐԱԻՐ

**ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ
ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ՊԻՏԻ ԲԱՐՉՐԱՆԱՔ ԱՆՉՆԱԿԱՆ ԿԵՑՈՒԱԾՔՆԵՐԸ ԵՒ ՀԱՍՆԻՆՔ ՊԵՏԱԿԱՆԻՆ

24 Հոկտեմբերին Միացեալ Նահանգներու Քոնկրետի 46 անդամներ Լեոնայիցի Ղարաբաղի Գաղափար Արկարի Ղուկասեանին յղեցին նամակ մը՝ շնորհաւորելով անոր վերընտրութիւնը: «Մենք կը շնորհաւորենք ձեզ՝ 11 Օգոստոս 2002ին Լեոնայիցի Ղարաբաղի մէջ կայացած նախագահական ընտրութիւններուն տարած նշանակալից յաղթանակին առիթով, գրած էին ընկերակցականները նամակին մէջ: Գնահատելով ընտրութիւններուն մակարդակը՝ քոնկրետականները յայտնած էին. «Այդ ընտրութիւնները յստակ կերպով կ'ընդգծեն Լեոնայիցի Ղարաբաղի Հանրապետութեան փաստացի անկախութիւնը»...

Սակայն, ըստ երեւոյթին, Լեոնայիցի Ղարաբաղի Հանրապետութեան գոյութիւնն ու անկախութիւնը այնքան ալ փաստացի չեն Ուաշինգթոնի համար: Արդարեւ, ինչպէս իմ բնազդորդներն այս էջով, ԵԱՀԿի Մինսքի խմբակի Միացեալ Նահանգներու նախագահ Ռուտլիֆ Փերինս, Պաքու իր այցելութեան ընթացքին վերոյիշեալ քոնկրետականներուն բայցը նկատած է «անձնական կեցուածք» եւ իր երկրին պաշտօնական դիրքորոշումը փոխանցելով՝ ըսած է, թէ Միացեալ Նահանգներ չեն ճանաչար Լեոնայիցի Ղարաբաղի Հանրապետութիւնը եւ զօրավիզ կը կանգնին Ազրայէյնանի հողային ամբողջականութեան:

Այս «անձնական» եւ «պաշտօնական» կեցուածքներուն միջեւ բախումը մեզ կը մղէ խորհրդածութեան:

Հայ Դատի նախորդ էջով հաղորդած էինք, թէ Միացեալ Նահանգներու Քոնկրետի վերջին ընտրութիւններուն Հայ Դատի Յանձնախումբին զօրակցութիւնը վաշիտը թեկնածուներուն 94 առ հարիւր ընտրուած է: Այս մէկը մեծ յաջողութիւն էր թէւ, սակայն նաեւ մտածել կու տայ, թէ ճորընտիր թեկնածուներուն հայանպատ աշխատանքներն ու յայտարարութիւնները եւս «անձնական» պիտի նկատուին: Իսկ ի՞նչ պէտք է ընել «պաշտօնական» կեցուածքներու յանգեցում համար...

«Ազդակ»ի Սեպտեմբեր 13ի թիւին մէջ Հայ Դատի էջով թարգմանաբար լոյս տեսած յօդուածի մը մէջ «Քալիֆորնիա Քուրիըր» թերթին խմբագիր Յարութ Սասունեան ղյտել կու տար, թէ հայկական լուրեր, հակառակ իր կարգապահութեան աշխատանքին եւ արձանագրած յաջողութիւններուն, անկարող կը մնայ «հայերուն եւ Հայաստանի համար կարգ մը վնասակար հարցերու նկատմամբ Միացեալ Նահանգներու զօրակցութիւնը պահանջելու»: Ան այս մէկը կը վերագրէր այն իրողութեան, որ հայկական լուրեր իր աշխատանքը կեդրոնացուցած է Քոնկրետին վրայ եւ ոչ՝ պետական բոլոր մակարդակներուն, ինչպէս նաեւ՝ մասնագիտական եւ ոչ պետական շրջանակներու մէջ, անկախ այն իրողութենէն, որ այդ շրջանակները ազդեցիկ են եւ կը վաշիտը բաղադրական լուրը վարկ:

Հայկական Ցեղասպանութեան եւ Լեոնայիցի Ղարաբաղի Հանրապետութեան միջազգային ճանաչումը ապահովելու, Թուրքիոյ կողմէ Հայաստանի շրջափակումին վերջ տալու եւ, վերջապէս, հզօր հայրենիք մը կ'երտելու համար մեզի բարար չեն «անձնական» կեցուածքներ, այլ հարկ է պաշտօնական մակարդակի բարձրացնել աշխատանքը. պէտք է անցնինք յաջորդ հանգրուանին՝ Հայկական Ցեղասպանութեան ճանաչումը ամերիկացի խորհրդարանականներու մակարդակէն բարձրացնելու պետական մակարդակի, յանուն արդարութեան եւ նշմարտութեան:

Հ. ՄԱՅԻՍԵԱՆ

ԹՐՔԱԿԱՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԸ ԿՐ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒԻ

Մօտաւորապէս մէկ տարուան ընթացքին շատրու համար աննկատ եւ լաւ կազմակերպուած յարձակումներ կատարուեցան հայկական թիրախներու դէմ, որոնց շարքին՝ եկեղեցիներ, Հայկական Ցեղասպանութեան յուշարձաններ, հայկական դիւանագիտական ներկայացուցչութիւններ:

Յատկանշական է, որ Թուրքիոյ տարածքին յարձակումներու «գոհ» դարձան քրիստոնէական շարք մը այլ եկեղեցիներ եւս:

«Հաշտութեան» գործընթացի մասնակիցներին շատերը կը փորձէին լուռ անցնել այդ դէպքերուն վրայէն՝ թերեւս իրենց ծրագրերը չխանգարելու համար: Իսկ պատահական չէ, որ Թրքական իշխանութիւնները կը փորձէին հետեւողականօրէն ծածկել այդ դէպքերը՝ վստահաբար ոչ իրենց «անգործութիւնը» քողարկելու համար:

Յստակ է, որ այսքան

լաւ կազմակերպուած յարձակումները, Թրքական իշխանութիւններուն կողմէ կրակորական դիրքորոշումները եւ իրաւապահներու անգործութիւնը այնքան ալ պատահական չեն: Թրքական իշխանութիւնները վարժուած են միայն քրտական եւ ծախակողմեան «հաւանքիչները» բացայայտել:

Վերոյիշեալ անգործութիւնը երկար կը շարունակուէր, եթէ Թրքական իշխանութիւններուն ծրագրերը չուրէր չիջնային ահաբեկչներու մէկ սխալին պատճառով: Նոյնանման շատ դէպքեր տեղի կ'ունենային, եթէ ռազմարտումի մը պատրաստութեան ժամանակ Նոյեմբեր 8ին չլիբաւորուէր ահաբեկչական կատուցի անդամներէն մէկը:

Սակայն նոյնիսկ այս դէպքին մասին հաղորդումներու ժամանակ իրաւապահները կը խուսափին նշել այն կազմակերպութեան անունը, որուն անդամ է ահաբե-


կիչը: Սակայն թիրախներու ցանկը՝ հայկական եւ յուսնական կառույցներ, կը լուռնեն ծայրայեղական խմբակի մը առկայութիւնը: Թուրքիոյ պետական թէ ստուերային քաղաքական համակարգին ծանօթ ոեւէ անձ կրնայ բացայայտել նման կառույցներու եւ Թրքական գաղտնի ծառայութիւններու կապն ու աներեւոյթ համագործակցութիւնը: Կ'արժէ յիշել Յովհաննէս Պօղոս Բ. պապին դէմ կատարուած ահաբեկչութեան պատճառով ձերբակալուած գորչ դայական Մեհմէթ Ալի Աքբարի դատարանութեան բացայայտումները:

Նոյեմբեր 8ի պայթուածին բացայայտումը ցոյց տուաւ ո'չ միայն Թուրքիոյ տարածքին ահաբեկչական խմբակներու գոյութիւնը, այլեւ փաստեց, որ Անգարայի համար խորթ չէ ահաբեկչական միջոցներով պայթար:

ՏԱՐՈՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ

ԸՍՏ ՈՌԻՏՈՒՑ ՓԵՐԻՆԱՅԻ

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ ԶԵՆ ՃԱՆՉՆԱՐ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ



Փերինս

Ըստ Ազրայէյնանի «Էյ. Էն. Էս.» պատկերասփիւռի կայանի, ԵԱՀԿի Մինսքի խմբակին մէջ Միացեալ Նահանգներու ներկայացուցիչ Ռուտլիֆ Փերինս վերջերս Պաքու կատարած իր այցելութեան ընթացքին յայտնած է, թէ Միացեալ Նահանգներ զօրավիզ կը կանգնին Ազրայէյնանի հողային ամբողջականութեան եւ չեն ճանաչար Լեոնայիցի Ղարաբաղի Հանրապետութիւնը: Ան դիտել տուած է, թէ վերջին շրջանին Քոնկրետի 46 անդամներու կողմէ Լեոնայիցի Ղարաբաղի վերընտրուած նախագահ Արկարի Ղուկասեանին ուղղուած շնորհաւորական նամակը «անձնական կեցուածքի արտայայտութիւն է»: Փերինս ղյտել տուած է, թէ Մինսքի խմբակին հիմնական նպատակը Լեոնայիցի Ղարաբաղի կարգավիճակը հաստատելն է: Ան աւելցուցած է, որ Լեոնայիցի Ղարաբաղի մէջ տեղի ունեցած ընտրութիւնները պէտք չէ խանդարեն բանակցութիւններուն ընթացքը:

ՊԱՔՈՒ ՄԵՉ

ԲՈՂՈՔԻ ՅՈՅՑ՝ 46 ՔՈՆԿՐԵՏԱԿԱՆՆԵՐՈՒ ՔԱՅԼԻՆ ԴԵՄ



Յոյցերն տեսարան մը

Ազրայէյնանի Քաղաքային Համայնքի Համայնքային շահութեան կուսակցութիւնը 8 Նոյեմբերի Պաքուի ամերիկեան դեսպանատան առջեւ կազմակերպեց ցոյց մը՝ իր դժգոհութիւնը յայտնելու համար Միացեալ Նահանգներու Քոնկրետի 46 անդամներու դէմ, որովհետեւ անոնք շնորհաւորած էին Արկարի Ղուկասեանը Լեոնայիցի Ղարաբաղի նախագահ վերընտրութեան առիթով: Ըստ բողոքող ազրայէյնանցիներուն, քոնկրետականներու կողմէ Արկարի Ղուկասեանին ուղղուած շնորհաւորական ուղերձները կը հակասեն միջազգային սկզբունքներուն եւ Ազրայէյնանի տարածքային ամբողջականութեան վերաբերեալ Ուաշինգթոնի ստորագրած փաստաթուղթերուն: Յոյցի մասնակիցներուն համաձայն, «այս ահաբեկիչներ» տասնեակ հազարաւոր ազերիներ մահապատիժի ենթարկած են», «բռնազրուած են Ազրայէյնանի հողերը», որուն պատճառով «1988էն ի վեր մօտ մէկ միլիոն ազրայէյնանցի գաղթական դարձած է: Յոյցին կազմակերպիչ Քաղաքային Համայնքային կուսակցութիւնը յայտնած է, թէ Ուաշինգթոն պէտք է դէմ կանգնի «այս տեսակի պետութիւններուն»: Կուսակցութեան առաջնորդները ամերիկեան վարչակարգի պատասխանատուներէն պահանջեցին հակապետական քայլեր, ինչպէս նաեւ՝ «պատասխանատուութեան կանչել ահաբեկիչներու զօրակցող քոնկրետականները»: Յուշարարներէն պատահականութեամբ մը այս ըրակցականութեամբ յուշագիր մը յանձնած է Պաքուի մէջ ամերիկեան դեսպանատան պատասխանատուներուն:

ՀԱԿԱՌԱԿ ԻՐ «ՄԵՂՍԱՅՈՒՄԻՆ»

ՎՈՒՅՈՎԻԹՅ ԿՐ ՄՆԱՅ ՄԻԵԻՆՈՅՆ ԹՐՔԱՄԷՏԸ

Միացեալ Նահանգներու պաշտպանութեան փոխ նախարար Փոլ Վոլֆօւիթց Յուլիս 14ին «Սլ. Էն. Էն. Թուրք»ին տրուած հարցազրոյցի մը

Միացեալ Նահանգներու նախկին նախագահ Ռոնալդ Ռեյգանի աւագ խորհրդատու Քէն Նաչիկեան եւ չորս անգամ կ'ընտանքի քաղաքագետ

Փոլ Վոլֆօւիթց նաեւ նշած է, թէ Թուրքիան կարեւոր դաշնակից է, կ'օժանդակէ Միացեալ Նահանգներուն՝ ահաբեկչութեան դէմ պատ-

մէջ թրքամէտ արտայայտութիւններ ունեցած էր Թուրքիոյ մասին՝ նշելով. «Փորքաւսն ունեւթիւններու հանդէպ ցուցաբերուած վերաբերմունքէն կարելի է որոշել, թէ երկիր մը ժողովրդավարական է, կամ ոչ»: Այս իմաստով Թուրքիա զիս սպաւորեց»:



ՍԵԿ ՎՈՒՅՈՎԻԹՅ

Օրին Ամերիկացի Հայ Դատի Յանձնախումբը անմիջապէս արձագանգած էր այս արտայայտութեան՝ Վոլֆօւիթցին պահանջելով յետս կոչել Թուրքիոյ մասին անհիմն յայտարարութիւնները: Հայ Դատի Յանձնախումբին կողմէ եւ բազմաթիւ ամերիկահայերու նամակները մնացած էին անպատասխան:

«Քալիֆորնիա Քուրիըր» թերթի խմբագիր Յարութ Սասունեան թերթին 7 Նոյեմբերի համարին մէջ կ'անդրադառնայ այս երեւոյթին եւ կը տեղեկացնէ, որ Վոլֆօւիթցի կ'վերջոյ պատասխանած է երկու ամերիկահայերու նամակներուն: «Քալիֆորնիա Քուրիըր» եւս միանայով արշաւին՝ կողմ ուղղած էր Միացեալ Նահանգներու հայութեան, ասորիներուն, կիպրացիներուն, արաբներուն եւ քիւրտներուն՝ ամերիկացի պաշտօնատարին ուղղուած նամակներով ընդվզում յայտնել՝ իրեն «ամենահանգուրժոնական» երկրին՝ Թուրքիոյ քաղաքականութեան գոհ միջոցաւոր անմիջներու հետեւորդներ: Վոլֆօւիթցի հասած է աւելի քան հազար նամակ:

ընտրուած Լարի Չարեան: Կը սպասուէր, որ ամերիկացի պաշտօնատարը գոնէ պատասխանէր այս հանրածանօթ գործիչներուն նամակներուն, սակայն անոնց նամակները եւս անտեսուած էին:

Այսուհանդերձ Չարեան նամակներով եւ հեռաձայնով հետեւողականօրէն հետապնդելով հարցը՝ վերջապէս անկէ կը ստանայ հետեւեալ նամակը. «Կը վստահեցընեմ, որ այսօրուան ժողովրդավար Թուրքիոյ մասին ակնարկներու մէջ չեմ ուզած անտեսել Օսմանեան ժամանակաշրջանին հայ ժողովուրդին կրած դառն տառապանքները: Այդ դէպքերը 20րդ դարու մեծ ողբերգութիւններու շարքին են: Ժամանակակից Թուրքիան բարելաւուած է եւ պիտի շարունակէ իր արեւելք մարդկային իրաւունք մարդին մէջ իր ընթացքը: Թրքական կառավարութիւնը վերջին վարդապետ արձանագրեց այդ բնագաւառին մէջ՝ փորձամասնութիւններուն նկատմամբ նոր օրէնքներ որդեգրելով»:

ԱՉՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ՝ ՌԻԱՏԻ ՄԵՉ

Սէնտական Արարիոյ Աշխարհի Երիտասարդութեան Համագումարը վերջերս Ռիատի մէջ կազմակերպած է «Երիտասարդութիւնը եւ համաշխարհայնացումը» թեմայով խորհրդաժողով մը, որուն մասնակցած են 40 երկիրներէ 600 ներկայացուցիչներ: Խորհրդաժողովին ներկայ եղած է նաեւ գաղթականներու հարցով Ազրայէյնանի կառավարական բաժանմունքի նախագահ Քուրպան Սատիբով, որ առիթը չէ փախցուցած խորհրդաժողովը հակահայ քարոզչութեան բեմի վերածելու:

Ան խօսած է Լեոնայիցի Ղարաբաղի տագնապին եւ ազերիներուն դէմ «Հայկական ահաբեկչական արարքներու» մասին: Սատիբով խորհրդաժողովի մասնակիցներուն բաժնած է ազերի գաղթականներուն թիրաքուն մասին տուեալներ ու բացատրական այլ ճրատարակութիւններ եւ պատկերներու այլոմներ: Սատիբով նաեւ ցուցադրած է ազերի գաղթականներու եւ «ազրայէյնանական ողբերգութեան» մասին ժապաւէններ:

PHOTO NERSES advertisement for photo services, including contact information and a list of services offered.

ԱՆՈՒԱՆԻ ԹԱԻՉՈՒԹԱԿԱՀԱՐԸ ԿԸ ՀՄԱՅԷ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

ԵՕ-ԵՕ ՄԱՅԻ ՆՈՒԱԳԱՆՈՒՄԲԸ ԿԸ ԽՏԽՏԷ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ԱԿԱՆՋՆԵՐՆ ՈՒ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ, ԿԸ ԳՐԷ «ՃԻՍԿՈ ՍԱՆ-ԹԱՅՍ» ԹԵՐԹԸ

Անոնք նստած էին ծնունդները իրենց ավիան մէջ առած, ոտքերը ճոճելով «Օրքսքրա Նոլ» ի թաւաշէնայ աթոռներուն վրայ, մինչ կ'ուսնկնդրէին բեմին վրայ լարեր թրթռացող եւ թմբուկներ զարնող երաժիշտները:



Երաժշտական գործիքները, որոնք կը հնչէին, ծանօթ էին. Զինաստանէն փիփա մը, իրանէն սանդուխ մը, Հայաստանէն տուտուկ մը...:

Անծանօթ էին նաեւ երգերը, որոնք շարքին էր իտալական կտոր մը՝ յօրինուած 1500ական տարիներուն, եւ՝ աւանդական, բայց անանուն պարսկական երգ մը:

Սակայն հոն ներկայ էր ակնոցաւոր մարդ մը՝ ԵՕ-ԵՕ Մա, որ պարզ թաւաշէնով մը կը նուազէր: Բոլորը ծանօթ էին անոր:

ԵՕ-ԵՕ Մայի եւ անոր «Մետաքսի Ճամբու Նուագախումբ»-ին կատարած երաժշտութիւնը խոխոսեց Շիբակոյի Ցրոզ դասարանի հարիւրաւոր աշակերտներուն ականջն ու երեւակայութիւնը:

«Լուսնի լոյս, աստղեր եւ ամէն ինչ, անասուններ, որոնք կը վազէին եւ կը թռնէին» մանչուկ մը այսպէս նկարագրած է իր տեսած բաները, երբ աչքերը գոց կ'ուսնկնդրէր Ռաւէլի «Դաշնակի Եռեակը» (էջ. մայրըրով), կատարողութեամբ ԵՕ-ԵՕ Մայի, ղեկավար՝ Քոլին ձէյքըպպընի եւ դաշնակահար Ժոն Զէնի:

Շիբակոյի Սիմֆոնիք նուագախումբին հետ «Մետաքսի Ճամբու Նուագախումբ»-ին 8 ելոյթներուն յայտագրին մաս կը կազմէին դաստիարակչական ձեռնարկներ: Այսպէս, երկու օրուան վրայ երկարող նուագախումբին փորձերուն հրաւիրուած էին 8000 աշակերտներ, որոնք կու գային Շիբակոյի եւ քաղաքին արուարձաններուն տարածքին

գտնուող 70 դպրոցներէ:

ԵՕ-ԵՕ Մա Մետաքսի ճամբու ծրագիրը յղացած է 1998ին, երաժշտական նիւթերու յատկացուած աշխատանքային սենեակներու, համերգներու եւ փառատօներու միջոցով պեղելու համար այն մշակոյթներն ու աւանդութիւնները, որոնք ծաղկած են արեւելեան Ասիոյ եւ Եւրոպայի միջեւ երկարող առեւտուրի «Մետաքսի ճամբուն» վրայ:

«Կը փորձենք նոր ճամբաներ բանալ մանուկներուն ականջներուն եւ ուղեղին համար, որպէսզի անոնք Մետաքսի ճամբուն մասին մտածեն ոչ թէ իրրեւ 300 տարի առաջ գոյութիւն ունեցած բան մը, այլ՝ մինչեւ այսօր շարունակուող կենդանի աւանդութիւն մը», կը բացատրէ ծրագրին պատասխանատուն՝ Էսթրա Ուոն:

Պարզ թիկնոց մը եւ լայն տարատ մը հագած՝ Մա աշակերտներուն ըսաւ, թէ ինք «պարզապէս հետաքրքիր մանուկ մըն էր», որուն տարբեր երկիրներու եւ մշակոյթներու նկատմամբ հետաքրքրութիւնը ծնած էր 12 տարեկանին, տան պարտականութիւն մը կատարելու ընթացքին:

«Կը դիտէի երկրագունդը, ըսաւ ան, եւ անդրադարձայ, թէ իրականութեան մէջ շատ բան էի գիտեր աշխարհի մասին»:

Կարգ մը մանուկներ հմայուած էին թաւաշէնակահարին ներկայութեամբ:

Աշխարհի տարբեր կողմերէն 35 երաժիշտներ մաս կը կազմեն քաղաքէ քաղաք շրջող նուագախումբին: Շիբակոյէն, Նիւ Եորքէն, Պոսթընէն, Իրանէն, Հնդկաստանէն եւ Հայաստանէն երաժիշտներ ելոյթ ունեցան Շիբակոյի համերգներուն ընթացքին:

(ՅԱՊԱՒՈՒԱՄ)

ՉԳԱՅԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՄԸ

ՈՒՄԱԿԱՆ «ՆՈՐՏ-ՕՍՅ» ԵՐԱՇՏՆԱԿԱՆ ԹԱՏԵՐԱՆԱԴՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐՆ ՈՒ ՆՈՒԱԳԱՆՈՒՄԲԸ ԿԸ ԿԵՐԱԴԱՐՆԱՆ ԲԵՄ՝ ՆԻԹԱԿԱՆ ԱՂԲԻՐՆԵՐ ԱՊԱՆՈՎԵԼՈՒ ԵՒ ԹԱՏԵՐԱՆԱԴՐ ԿԵՐԱԿԵՆՂԱՆՑՆԵԼՈՒ ԸԱՍԱՐ: «ՏԸ ՆՈՒ ԵՈՐԸ ԹԱՅՍԻ», «ՈՈՅՈՐԸ» ԵՒ «ՊԻ. ՊԻ. ՍԻ.» ԿԸ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՆ.



ՅՆՏՈՒՄ, ԲԱՅՑ ՅԱՐՁԱԿԱՆ «Նորտ-օսք»-ի համերգային ներկայացումին վերնագիրը կ'ըսէր. «Նորտ-օսք», մենք բեզի հետ ենք»:

Սրահին մէջ լոյսերը մարեցան, երաժիշտները ներս մտան եւ իրենց տեղերը գրաւեցին:

